

➤ Բ. Սպինոզա

Սպինոզա, հրեայ ծագումով հոլանդացի բանապաշտ փիլիսոփան, քննադատած էր Աստուածաշունչը եւ այս պատճառով ալ վտարուած էր հրեական համայնքէն: Ան նաեւ հալածուած էր քրիստոնէայ եկեղեցիներէն: Սպինոզայի համաձայն Աստուած, համայն բնութեան բացարձակ ու անվերջ Եութիւնն (Substance) Է: Աստուած, *ստեղծող բնութիւն* Է (լատ.՝ *natura naturans*), մինչ ուրիշ ինչ որ կայ կամ գոյութիւն ունի՝ *ստեղծուած բնութիւն* Է (լատ.՝ *natura naturata*), ինչպէս աշխարհը եւ մարդը: Իսկ մարդու, որպէս վերջաւոր Էակի, գլխաւոր յատկանիշներն են.- *բանականութիւնը*⁽²¹⁾ (Rationality) եւ *յոյզերը*⁽²²⁾ (Emotion): Սպինոզայի համաձայն բանականութիւնը՝ նաեւ *կամք*⁽²³⁾ (Will) Է, իսկ յոյզերը՝ երեք են.- կիրքը, ուրախութիւնը եւ տխրութիւնը:

Թէեւ Սպինոզայի գլխաւոր երկը՝ «*Բարոյագիտութիւն*» („*Ethica*“, 1667 թ.) կը կոչուի, սակայն երկի հինգ մասերէն միայն վերջին երկուքին մէջ կը խօսուի գործնական բարոյագիտութեան մասին: Առաջին երեք մասերուն մէջ, յաջորդաբար կը խօսուի՝ Աստուծոյ, բանականութեան եւ յոյզերու մասին: Չորրորդ մասին մէջ, ան կը խօսի մարդու անազատութեան եւ յոյզերու գերակայութեան մասին. իսկ հինգերորդ մասին մէջ՝ մարդու ազատութեան եւ բանականութեան գերակայութեան մասին:

Սպինոզայի բարոյագիտութիւնը պատուիրաններու եւ արգելքներու ամբողջութիւն մը չէ, այլ տեսութիւն մըն Է հիմնուած՝ բնութեան բացարձակ եւ անվերջ Եութեան (Substance) անհրաժեշտութեան վրայ, որ կը գործէ մարդու բնական յատկանիշներու օրէնքներով: Մարդ պէտք Է անհրաժեշտօրէն ճանչնայ սեփական զանազան յոյզերը եւ որոշէ անոնց յարաբերութիւնը՝ բանականութեան հետ: Սպինոզա կը զանազանէ կենսական պատշաճ յոյզերը (որոնք հաճելի զգացումներ կը յառաջացնեն)՝ անպատշաճ յոյզերէն (որոնք տհաճ զգացումներ կը յառաջացնեն) եւ անոնց ներգործութենէն. մարդ իր բանականութեան (նաեւ կամքի) հզօրութեամբ կրնայ տիրել իր անպատշաճ յոյզերուն վրայ:

Մարդու վարմունքը հիմնաւորող բարոյական *բարիք* եւ առաքիտութիւնները, Սպինոզայի համար հաւասար են սեփական օգուտին եւ ինքնապահպանման (Self-preservation): Այլ խօսքով, մարդկային բնութիւնը կ'ենթարկուի ինքնապահպանութեան օրէնքին եւ մարդ եսասիրութեամբ մը նախ կը մտածէ իր սեփական գոյութեան ու կեցութեան մասին: Սպինոզայի համաձայն, ինքնապահպանութեան օրէնքին հետեւիլը ինքնին առաքիտութիւն մըն Է: Այսուհանդերձ, Սպինոզայի բարոյագիտութիւնը զուտ եսապաշտական (Egoist) չէ, այլ կը պարփակէ նաեւ այլասիրութեան (Altruist) յատկանիշներ, որովհետեւ անհատը կ'ապրի ընկերային շրջանակի մը մէջ:

(21) **Բանականութիւն** (Rationality) հասկացութեան մասին, տե՛ս Մաս – 9, Էջ 413:

(22) **Յոյզ** (Emotion) հասկացութեան մասին, տե՛ս Մաս – 9, Էջ 457:

(23) **Կամք** (Will) հասկացութեան մասին, տե՛ս Մաս – 9, Էջ 483: